

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Սահմանադրական իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1905/B08 <<Վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում>>

Որակավորման
աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝ իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ Գ. Մուլնեցյան

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2013

1905/ B08, Վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար, 28 ժամ ինքնուրույն աշխատանք)

5-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է ուսանողին մատուցել մեթոդաբանական գիտելիքներ հանրային իրավունքի կառուցվածքային մասը կազմող այնպիսի ինստիտուտի վերաբերյալ, ինչպիսին է <<վարչական պատասխանատվությունը>>: Դասընթացը նպատակ ունի ուսանողին ներկայացնել վարչական զանցանքի, վարչական հարկադրանքի էությունն ու դրանց առնչվող արդիական հիմնախնդիրները, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության համակարգը, վարչական պատասխանատվության էությունն ու խնդիրները, տույժերի հասկացությունն ու նրանց համակարգը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները, դրանց քննության ու լուծման առանձնահատկությունները, որոշումների վերանայման հիմքերն ու կարգը:

Դասընթացի խնդիրներն են՝

- վարչական պատասխանատվության էական հատկանիշների վերաբերյալ ուսանողին մեթոդաբանական կայուն գիտելիքներով ապահովումը.

- վարչական պատասխանատվությունը և հարակից իրավական ինստիտուտները իրավական պատասխանատվության այլ տեսակներից, ձևերից տարանջատելու վերաբերյալ ուսանողի իմացության ապահովումը.

- ուսանողի մոտ վարչական պատասխանատվության և դրան վերաբերող հիմնախնդիրների նկատմամբ վերլուծական և կառուցողական մոտեցման կատարելագործումը:

1.2. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԸՆԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա համարժեք գիտելիքներ՝

- վարչական պատասխանատվության՝ որպես իրավական համակարգային երևույթի այն էական հատկությունների մասին, որոնցով այն տարանջատվում են այլ իրավական համանման ինստիտուտներից,

- վարչական հարկադրանքի, տույժերի իրավական հատկությունների վերաբերյալ,
- առանձին վարչական վարույթների առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

(Ըուն մասնագիտական կարողություններ)

- վարչական պատասխանատվությունը տարանջատելու հանրային իրավական պատասխանատվության այլ տեսակներից,

- կոնկրետ իրավախախտման պարագայում իրականացնել դրա կապակցությամբ հարուցված վարչական վարույթը՝ հաշվի առնելով այդպիսի վարույթների համար սահմանված առանձնահատկությունները:

- ինքնուրույն կազմել վարչական ակտեր և վարչական վարույթին առնչվող այլ իրավական փաստաթղթեր (արձանագրություններ, միջնորդություններ, ծանուցումներ և այլն):

(Ընդհանրական կարողություններ)

- տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (համացանցի ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական աշխատանքներ և այլն) օգտվելու ունակության կատարելագործում,

- ձևական տրամաբանության կանոնների պահպանմամբ իրավաբանական փաստերի նկատմամբ ցուցաբերելու վերլուծական և կառուցողական մոտեցում:

1.3. ՄՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

- անցկացվում են երկու ընթացիկ քննություն և եզրափակիչ քննություն:
- 2 ընթացիկ ստուգումները անցկացվում են գրավոր: Ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Գրավոր ստուգման հարցատոմսերը պարունակում են 2 խնդիր՝ յուրաքանչյուրը 2 միավոր առավելագույն արժեքով (միավորների քայլը 0.5 է): Առաջին ընթացիկ ստուգումը ներառելու է 1-5 թեմաները, իսկ երկրորդը՝ 6-10 թեմաները:
- եզրափակիչ բանավոր քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Հարցատոմսը պարունակելու է 4 հարց՝ յուրաքանչյուրը 2,5 միավոր արժեքով (միավորների քայլը 0.5 է):

II. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դասընթացի բովանդակությունը

ԹԵՄԱ ԱՌԱՋԻՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(3 ժամ դասախոսություն)

1. <<Վարչական պատասխանատվություն>> հատուկ դասընթացի կողմից ուսումնասիրվող առարկայի արդիականությունը կանխորոշող գործոնները: 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության և պրակտիկայի զարգացման հիմնախնդիրները: 3. Հատուկ դասընթացի խնդիրները: 4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծում տեղ գտած նոր դրույթների համադրումը գործող օրենսգրքի դրույթներին:

Հարցեր 1-4: Կարդացվում է ներածական դասախոսություն:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:

ԹԵՄԱ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔ

(2 ժամ դասախոսություն)

1. Համոզումը և հարկադրանքը՝ որպես իշխանությունն իրականացնելու մեթոդներ: 2. Իրավական հարկադրանքը և նրա տեսակները: 3. Վարչական հարկադրանքի

հասկացությունը և տեսակները /վարչական նախագգուշական միջոցներ, վարչական խափանիչ միջոցներ, վարչական պատասխանատվության միջոցներ/:

Հարցեր 1-3: Անցկացվում է դասախոսություն՝ սխեմաների օգտագործման և խմբային քննարկման զուգակցմամբ: Ուսանողները նախապես ուսումնասիրում են իրենց հանձնարարված նյութերը և պատրաստված ներկայանում դասին:

Հարցեր 1-2: Ինքնուրույն աշխատանք. ուսանողներին տրվում են նյութեր, որոնց ուսումնասիրության արդյունքում նրանք պետք է ավելի խորությամբ ուսումնասիրեն իշխանության իրականացման մեթոդները, իրավական հարկադրանքի տեսակները:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
5. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:
6. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի ՍԴՈ 1048 որոշում:
7. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ 1059 որոշում:

ԹԵՄԱ ԵՐՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության խնդիրները: 2. Վարչական իրավախախտման (զանցանքի) հասկացությունը: 3. Վարչական իրավախախտման սահմանազատումը հանցագործությունից և կարգապահական զանցանքից: 4. Վարչական իրավախախտումների կրկնակիությունը: 5. Վարչական իրավախախտման (զանցանքի) կազմը /օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ/:

Հարցեր 1-5: Կարդացվում է դասախոսություն՝ ներկայացնելով հայցերի առանձին տեսակների էությունը և հայցադիմումի կազմման հմտությունները:

Հարցեր 3-6: Ինքնուրույն աշխատանք. ուսանողներին նախօրոք տրվում են գործնական նյութեր՝ դրանց ուսումնասիրության արդյունքում կոնկրետ գործով պատասխանատվության տեսակի հարցի որոշման համար:

Հարցեր 3-5: Սեմինար. ուսանողները նախապես ուսումնասիրում են իրենց հանձնարարված նյութերը և պատրաստված ներկայանում դասին: Նրանց առաջադրվում են գործնական խնդիրներ և քննարկվում են դրանց վերաբերյալ առաջարկված լուծումները:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Брэбан Г. Французское административное право. Перевод с французского, под ред. и со вступительной статьей доктора юридических наук С. В. Боботова, М., ПРОГРЕСС, 1988.- 488с.

4. Россинский Б.В., Старилов Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
6. ՀՀ վարչական դատարանի 2012 թվականի հուլիսի 14-ի ՎԴ /5409/05/11 վճիռ:
7. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի ՍԴՈ 1048 որոշում:
8. ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի ՎԴ/0348/05/08 որոշում:
9. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 26-ի ՎԴ/5569/05/08 որոշում:
10. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի ՎԴ/0073/05/08 որոշում:

ԹԵՄԱ ՉՈՐՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
 (3 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Վարչական պատասխանատվության հասկացությունը և խնդիրները: 2. Վարչական պատասխանատվությունը՝ որպես իրավական պատասխանատվության հատուկ տեսակ: 3. Վարչական պատասխանատվության իրավական հիմքերը: 4. Վարչական պատասխանատվության ենթակա անձինք /քաղաքացիների պատասխանատվությունը, անչափահասների պատասխանատվությունը, պաշտոնատար անձանց պատասխանատվությունը, զինվորական ծառայողների և մյուս անձանց պատասխանատվությունը, որոնց վրա տարածվում են կարգապահական կանոնադրքերի գործողությունները, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց պատասխանատվությունը, իրավաբանական անձանց պատասխանատվության հիմնախնդիրը/: 5. Ծայրահեղ անհրաժեշտություն, անհրաժեշտ պաշտպանություն, անմեղսունակություն: 6. Վարչական պատասխանատվությունից ազատելու և այն սահմանափակելու հիմքերը: 7. Կազմակերպությունների վարչական պատասխանատվությունը: 8. Կարգապահական պատասխանատվությունը:

Հարցեր 1-3: Կարդացվում է դասախոսություն:

Հարց 5-Ինքնուրույն աշխատանք. ուսանողներին իրական դատական գործերից (իրավակիրառ պրակտիկա) նախապես հանձնվում են հայցադիմումներ և դրանց վերաբերյալ ներկայացված պատասխաններ, առարկություններ, որոնց ուսումնասիրությունից հետո ուսանողները պարզում են վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքների առկայությունը:

Հարցեր 1-4, 6-8: Սեմինար. ուսանողները նախապես ուսումնասիրում են իրենց հանձնարարված նյութերը և պատրաստված ներկայանում դասին: Սեմինարների ընթացքում առավել հանգամանորեն քննարկվում են թեմայի հարցերը:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Брэбан Г. Французское административное право. Перевод с французского, под ред. и со вступительной статьей доктора юридических наук С. В. Боботова, М., ПРОГРЕСС, 1988.- 488с.
4. Россинский Б.В., Старилов Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
6. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:

7. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ 920 որոշում:
8. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ 924 որոշում:

ԹԵՄԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ

(2 ժամ դասախոսություն)

1. Վարչական տույժի հասկացությունը: 2. Վարչական տույժերի համակարգը (նախագուշացում, տուգանք, վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի, ստացված շահույթի (եկամտի) հատուցմամբ վերցնելը, վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, որսորդական իրավունքից) զրկում): 3. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչական վտարումը: 4. Վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու ընդհանուր կանոնները:

Հարցեր 1-4: Կարդացվում է դասախոսություն վարչական տույժի էության և տույժերի համակարգի, տույժ նշանակելու ընթացքում առաջացող խնդիրների և դրանց հաղթահարման (լուծումների) վերաբերյալ:

Հարց 4: Ինքնուրույն աշխատանք. ուսանողներին վարչական պրակտիկայից ներկայացվում են նյութեր, որոնց հիման վրա նրանք, վարչական տույժի նշանակման կանոններին համապատասխան, որոշում են, թե ինչ տույժ պետք է կիրառվի կոնկրետ գործով իրավախախտի նկատմամբ:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Брэбан Г. Французское административное право. Перевод с французского, под ред. и со вступительной статьей доктора юридических наук С. В. Боботова, М., ПРОГРЕСС, 1988.- 488с.
4. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
6. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:
7. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 10-ի ՍԴՈ 924 որոշում:
8. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ 1054 որոշում:
9. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ 1059 որոշում:
10. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի ՎԴ/0705/05/10 որոշում:
11. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի ՎԴ/0735/05/10 որոշում:

ԹԵՄԱ ՎԵՅԵՐՈՐԴ

**ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՆՁԻՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՄԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

(2 ժամ դասախոսություն)

1. Վարչական պատասխանատվությունը քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար: 2. Վարչական պատասխանատվությունը սեփականության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար: 3. Վարչական պատասխանատվությունը շրջակա բնական միջավայրի, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության բնագավառում կատարված իրավախախտումների համար: 4. Վարչական պատասխանատվությունն արդյունաբերության, էլեկտրական, ջերմային և ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում կատարված իրավախախտումների համար: 5. Վարչական պատասխանատվությունը գյուղատնտեսության ոլորտում կատարված իրավախախտումների, անասնաբուժական-սանիտարական կանոնների խախտումների համար: 6. Վարչական պատասխանատվությունը տրանսպորտում, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառում կատարված իրավախախտումների համար: 7. Վարչական պատասխանատվությունը բնակարանային-կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում կատարված վարչական իրավախախտումների համար: 8. Վարչական պատասխանատվությունն առևտրի, ֆինանսների և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բնագավառում կատարված վարչական իրավախախտումների համար: 9. Վարչական պատասխանատվությունը հասարակական կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար: 10. Վարչական պատասխանատվությունը կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար: 11. վարչական պատասխանատվությունն արդարադատության իրականացման բնագավառում կատարված իրավախախտումների համար: 12. Վարչական պատասխանատվությունը զինվորական հաշվառման բնագավառում կատարված իրավախախտումների համար: 13. Վարչական պատասխանատվությունը մաքսային կանոնների խախտումների համար: 14. Վարչական պատասխանատվությունը բանկային օրենսդրության խախտումների համար: 15. Վարչական պատասխանատվությունը քաղաքաշինության ոլորտում:

Հարցեր 1-15: Կարդացվում է դասախոսություն առանձին իրավախախտումների մասով վարչական պատասխանատվության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
5. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:
6. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ 920 որոշում:
7. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 4-ի ՎԴ6/0365/05/08 որոշում:
8. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 29-ի ՎԴ3/0161/05/11 որոշում:

ԹԵՄԱ ՅՈԹԵՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի հասկացությունը: 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավական հիմքերը: 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները և սկզբունքները: 4. Ապացույցները վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում: 5. Վարույթի մասնակիցները: 6. Վարույթի փուլերը: 7. Ժամկետները վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում: 8. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը: 9. Վարչական պրոցեսուալ հարկադրանքի միջոցները:

Հարցեր 1-9: Կարդացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 2, 4-8: Ինքնուրույն աշխատանք. ուսանողներին տրվում են խնդիրներ՝ վարչական իրավախախտման գործերի վերաբերյալ վարույթի ընդհանուր կանոնների համաձայն դրանց լուծման համար:

Հարցեր 1-4, 6-8: Սեմինար: Ուսանողները նախապես ուսումնասիրում են իրենց հանձնարարված նյութերը և պատրաստված ներկայանում դասին: Սեմինարների ընթացքում առավել հանգամանորեն քննարկվում են թեմայի հարցերը:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Брэбан Г. Французское административное право. Перевод с французского, под ред. и со вступительной статьей доктора юридических наук С. В. Боботова, М., ПРОГРЕСС, 1988.- 488с.
4. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
6. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:
7. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 27-ի ՍԴՈ 836 որոշում:
8. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ 839 որոշում:

ԹԵՄԱ ՈՒԹԵՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

(2 ժամ դասախոսություն)

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի հարուցումը և քննության արդյունքների ձևակերպումը: 2. Գործը քննության ուղարկելը: 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող իրավասու մարմինները և դրանց լիազորությունները: 4. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության նախապատրաստումը և որոշման ընդունում: 5. Վարչական իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու մասին որոշումը հանրությանը տեղյակ պահելը:

Հարցեր 1-5: Անցկացվում է դասախոսություն:

Հարցեր 1-4: Ինքնուրույն աշխատանք. ուսանողներին տրվում են վարչական վարույթի նյութեր վարչական գործի լուծման կապակցությամբ որոշումներ կազմելու համար:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Брэбан Г. Французское административное право. Перевод с французского, под ред. и со вступительной статьей доктора юридических наук С. В. Боботова, М., ПРОГРЕСС, 1988.- 488с.
4. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
6. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:
7. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ 1054 որոշում:
8. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի ՎԴ/0936/05/10 որոշում:
9. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի ՎԴ/1364/05/10 որոշում:
10. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 1-ի ՎԴ/0930/05/10/ որոշում:

ԹԵՄԱ ԻՆՆԵՐՈՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Վերանայման փուլերի ընդհանուր բնութագիրը: 2. Որոշումը բողոքարկելը: 3. Որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգումը: 4. Բողոքի հիման վրա որոշում կայացնելը:

Հարցեր 1-4: Անցկացվում է դասախոսություն:

Հարց 2-Ինքնուրույն աշխատանք. ուսանողներին տրվում են վարչական վարույթի նյութեր, որոնց հիման վրա ուսանողները պետք է կազմեն վարչական բողոքներ:

Հարցեր 1, 3-4: Սեմինար. ուսանողները նախապես ուսումնասիրում են իրենց հանձնարարված նյութերը և պատրաստված ներկայանում դասին: Ուսանողներին առավել մանրամասնությամբ ներկայացվում են վարչական բողոքի կազմման հատկությունները:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Брэбан Г. Французское административное право. Перевод с французского, под ред. и со вступительной статьей доктора юридических наук С. В. Боботова, М., ПРОГРЕСС, 1988.- 488с.
4. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
5. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
6. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:

ԹԵՄԱ ՏԱՍՆԵՐՈՐԴ
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(2 ժամ դասախոսություն)

1. Կատարման վարույթի ընդհանուր բնութագիրը: 2. Վարչական տույժի առանձին տեսակների վերաբերյալ որոշումների կատարման վարույթները: 3. Վարչական տուժերի մասին որոշումների առնչությամբ կայացված դատական ակտերի հարկադիր կատարումը:

Հարցեր 1-3: Կարդացվում է դասախոսություն:

Թեմայի վերաբերյալ գրականություն

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. – Երևանի պետ. համալս. – ԵՊՀ հրատ., 2012, 457-523 էջեր:
3. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.
4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
5. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք:

III. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՏԵՄԱԿԱՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐ

1. Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում-Եր.: ԱՌՏ, 2007.-248 էջ:
2. ՀՀ վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ/ Ընդհանուր խմբագրությամբ Գ.Դանիելյանի. Երևանի պետ. համալս.-ԵՊՀ. Հրատ., 2012.-704 էջ:
3. Գ.Դանիելյան, Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ/Եր.: <<Տիգրան Մեծ>> հրատ., 2011.-384 էջ:
4. Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ/ Ընդհանուր խմբագրությամբ Վ.Պողոսյանի, Ռ.Ռուբելի, Եր. <<Բավիղ>> հրատ., 2011.-424 էջ:
5. Брэбан Г. Французское административное право. Перевод с французского, под ред. и со вступительной статьей доктора юридических наук С. В. Боботова, М., ПРОГРЕСС, 1988.-488с.
6. Россинский Б.В., Стариков Ю.Н. Административное право: учебник 4-е изд., М.: Норма: Инфра-М, 2010.-928 с.

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է հանրաքվեով 1995 թվականի հուլիսի 5-ին, փոփոխվել է հանրաքվեով 2005 թվականի նոյեմբերի 27-ին).
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին).
3. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին).
4. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք (ընդունվել է 2007թ. փետրվարի 21-ին).
5. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք (ընդունվել է 2000թ. հուլիսի 6-ին).

6. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին).
7. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք (ընդունվել է 1999թ. փետրվարի 5-ին).
8. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին).
9. <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին).
10. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. մայիսի 7-ին).
11. <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին).
12. <<Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին>> ՀՀ օրենք (2006թ. փետրվարի 18-ին).
13. <<Զինվորական ծառայություն անցնելու մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին).
14. <<Սյլընտրանքային ծառայության մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին).
15. <<Օտարերկրացիների մասին>> ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին).
16. <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին>> ՀՀ օրենքը (ընդունվել է 1995թ. նոյեմբերի 16-ին).
17. <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքը (ընդունվել է 1998թ. դեկտեմբերի 2-ին):
18. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 27-ի ՍԴՈ 836 որոշում:
19. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ 839 որոշում:
20. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ 864 որոշում:
21. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ 920 որոշում:
22. ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ 924 որոշում:
23. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի ՍԴՈ 1048 որոշում:
24. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի ՍԴՈ 1054 որոշում:
25. ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 23-ի ՍԴՈ 1059 որոշում:
26. ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի ՎԴ/0348/05/08 որոշում:
27. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի մայիսի 27-ի ՎԴ/0073/05/08 որոշում:
28. ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 26-ի ՎԴ/5569/05/08 որոշում:
29. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի ՎԴ/0936/05/10 որոշում:
30. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի ՎԴ/1364/05/10 որոշում:
31. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի ՎԴ/0705/05/10 որոշում:
32. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի ՎԴ/0735/05/10 որոշում:
33. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 1-ի ՎԴ/0930/05/10/ որոշում:
34. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մարտի 4-ի ՎԴ6/0365/05/08 որոշում:
35. ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 29-ի ՎԴ3/0161/05/11 որոշում:
36. ՀՀ վարչական դատարանի 2012 թվականի հուլիսի 14-ի ՎԴ /5409/05/11 վճիռ:

ՀԱՐՑԱՇԱՐ

Էզրափակիչ բանավոր քննություն

1. <<Վարչական պատասխանատվություն>> հատուկ դասընթացի կողմից ուսումնասիրվող առարկայի արդիականությունը կանխորոշող գործոնները:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության և պրակտիկայի զարգացման հիմնահիմունքները:
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծում տեղ գտած նոր դրույթների համադրումը գործող օրենսգրքի դրույթներին:
4. Համոզումը և հարկադրանքը՝ որպես իշխանություն իրականացնելու մեթոդներ:
5. Իրավական հարկադրանքը և նրա տեսակները:
6. Վարչական հարկադրանքի հասկացությունը և տեսակները /վարչական նախագուշակական միջոցներ, վարչական խափանիչ միջոցներ, վարչական պատասխանատվության միջոցներ/:
7. Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության խնդիրները:
8. Վարչական իրավախախտման (զանցանքի) հասկացությունը:
9. Վարչական իրավախախտման սահմանազատումը հանցագործությունից և կարգապահական զանցանքից:
10. Վարչական իրավախախտումների կրկնակիությունը:
11. Վարչական իրավախախտման (զանցանքի) բաղկացությունը (օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ):
12. Վարչական պատասխանատվության հասկացությունը և խնդիրները:
13. Վարչական պատասխանատվությունը՝ որպես իրավական պատասխանատվության հատուկ տեսակ:
14. Վարչական պատասխանատվության իրավական հիմքերը:
15. Վարչական պատասխանատվության ենթակա անձինք (քաղաքացիների պատասխանատվությունը, անչափահասների պատասխանատվությունը, պաշտոնատար անձանց պատասխանատվությունը, զինվորական ծառայողների և մյուս անձանց պատասխանատվությունը, որոնց վրա տարածվում են կարգապահական կանոնադրքերի գործողությունները, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց պատասխանատվությունը, իրավաբանական անձանց պատասխանատվությունը):
16. Ծայրահեղ անհրաժեշտություն, անհրաժեշտ պաշտպանություն, անմեղսունակություն:
17. Վարչական պատասխանատվությունից ազատելու և այն սահմանափակելու հիմքերը:
18. Կազմակերպությունների վարչական պատասխանատվությունը:
19. Կարգապահական պատասխանատվությունը:
20. Վարչական տույժի հասկացությունը:
21. Վարչական տույժերի համակարգը (նախագուշացում, տուգանք, վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի, ստացված շահույթի (եկամտի) հատուցմամբ վերցնելը, վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, որսորդական իրավունքից) զրկում, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչական վտարումը):
22. Վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու ընդհանուր կանոնները:
23. Վարչական պատասխանատվությունը քաղաքացիների իրավունքների և բնակչության առողջության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար:
24. Վարչական պատասխանատվությունը սեփականության դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար:
25. Վարչական պատասխանատվությունը շրջակա բնական միջավայրի, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության բնագավառում կատարված իրավախախտումների համար:

26. Վարչական պատասխանատվությունն արդյունաբերության, էլեկտրական, ջերմային և ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում կատարված իրավախախտումների համար:
27. Վարչական պատասխանատվությունը գյուղատնտեսության ոլորտում կատարված իրավախախտումների, անասնաբուժական-սանիտարական կանոնների խախտումների համար:
28. Վարչական պատասխանատվությունը տրանսպորտում, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառում կատարված իրավախախտումների համար:
29. Վարչական պատասխանատվությունը բնակարանային-կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում կատարված վարչական իրավախախտումների համար:
30. Վարչական պատասխանատվությունն առևտրի, ֆինանսների և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բնագավառում կատարված վարչական իրավախախտումների համար:
31. Վարչական պատասխանատվությունը հասարակական կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար:
32. Վարչական պատասխանատվությունը կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների համար:
33. Վարչական պատասխանատվությունն արդարադատության իրականացման բնագավառում կատարված իրավախախտումների համար:
34. Վարչական պատասխանատվությունը զինվորական հաշվառման բնագավառում կատարված իրավախախտումների համար:
35. Վարչական պատասխանատվությունը մաքսային կանոնների խախտումների համար:
36. Վարչական պատասխանատվությունը բանկային օրենսդրության խախտումների համար:
37. Վարչական պատասխանատվությունը քաղաքաշինության ոլորտում:
38. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի հասկացությունը:
39. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավական հիմքերը:
40. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները և սկզբունքները:
41. Ապացույցները վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում:
42. Վարույթի մասնակիցները: Վարույթի փուլերը: Ժամկետները վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում:
43. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ենթակայությունը: Վարչական վարույթի հարկադրանքի միջոցները:
44. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի հարուցումը և քննության արդյունքների ձևակերպումը:
45. Գործը քննության ուղարկելը:
46. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող իրավասու մարմինները և դրանց լիազորությունները:
47. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելն ու որոշում ընդունելը:
48. Վարչական իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու որոշման մասին հանրությանը տեղյակ պահելը:
49. Վերանայման փուլերի ընդհանուր բնութագիրը:
50. Որոշման բողոքարկումը:
51. Որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգումը:
52. Բողոքի հիման վրա որոշում կայացնելը:
53. Կատարման վարույթի ընդհանուր բնութագիրը:
54. Վարչական տույժի առանձին տեսակների վերաբերյալ որոշումների կատարման վարույթները:
55. Վարչական տուժերի մասին որոշումների առնչությամբ կայացված դատական ակտերի հարկադիր կատարումը: